2024-2025 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **90** րոպե:
Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1.ՀՀ մայր օրենքը սահմանում է. «որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության…»

1. Փրկությանը
2. Պահպանությանը
3. Ազատությանը
4. Պաշտպանությանը

2.Զորամրցումներից մեկի ժամանակ Մենուա արքան իր Արծիբի նժույգով քանի՞ կանգուն է ցատկել:

1.22 կանգուն
2.25 կանգուն
3.12 կանգուն
4.15 կանգուն

3. Ո՞ր երկրի բանակի կազմում ստեղծվեց հայկական լեգեոնը.

1. Լեհական
2. Ալբանական
3. Ֆրանսիական
4. Սերբական

4. Նշվածներից ո՞վ Դավիթ-բեկի ժամանակ չի եղել առանձին զորաջոկատի հրամանատար:

1. Տեր-ավետիսը
2. Թորոսը
3. Փարսադանը
4. Մխիթարը

5. Ի՞նչ է որմնանցքը:

1. Հրաձգության ժամանակ զենքը հարմար տեղադրելու համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
2. Դիտարկման համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
3. Օդափոխության համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
4. Հրաձգության ժամանակ դիտարկումը ճիշտ կազմակերպելու հարմար տեղադրելու համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:

6. Որո՞նք են համարվում խուլ պատեր:

1.Այն պատերն են, որոնց վրա առանձնացված չեն պատուհանագոգեր:
2.Այն պատերն են, որոնց պատուհանագոգերը քողարկված են:
3.Այն պատերն են, որոնց վրա կան ձայնամեկուսիչներ:
4.Այն պատերն են, որոնք համարվում են տվյալ շինության հիմնական պատեր:

7. **Համապատասխանեցնել հրամանատարները ջոկատներին**

1.Անրանիկ Օգանյան	ա. 4 -րդ ջոկատ
2.Դրո	բ. 1-ին ջոկատ
3.Համազասպ Սրվանձտյան	գ. 3-րդ ջոկատ
4.Արշակ Գաֆաֆյան	դ. 2-րդ ջոկատ

1.1-բ, 2- դ, 3 – ա, 4 – գ
2.1-ա, 2- գ, 3 – դ, 4 - բ
3.1-դ, 2- բ, 3 – գ, 4 - ա
4.1-գ, 2- ա, 3 – դ, 4 - գ

8. **Ի՞նչ ֆունկցիա է կատարում փակաղակը:**
1.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
2.Փակաղակը փամփուշտը մղում է փողանցք, այնուհետև փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
3.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փամփշտանոցը, հարվածում է պարկուճին և փողից հանում է փամփուշտը:
4.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է գնդակը:

9. **Նշվածներից ո՞ր ուժը օդում չի ազդում գնդակի արագության վար:**
1.Ծանրության ուժը
2.Արքիմեդյան ուժ
3.Օդի դիմադրության ուժը
4.Երկրի ձգողության ուժը

10. **Որքա՞ն մարդ է զոհվել 1878 թվականին Չինաստանում Խուանխե գետի ջրհեղեղի հետևանքով:**
1.8 մլն
2.7 մլն
3.7.5 մլն
4.9 մլն

11. **Ի՞նչ է ձգաբանությունը (բալիստիկան):**
1.Ձգաբանությունը գիտություն է հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների՝ որպես ազատ նետված մարմինների շարժման մասին:
2.Ձգաբանությունը գիտություն է գնդակի՝ որպես ազատ նետված մարմնի շարժման մասին:
3. Ձգաբանությունը գիտություն է հրետանային արկերի և ավիառումբերի նետման մասին:
4. Ձգաբանությունը գիտություն է հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների նետման մասին:

12. **Նշվածներից ո՞րը ուշադրության տեսակ չէ:**
1.Ներքին
2.արտաքին
3.կամածին
4.արտակամածին

13. **Նշվածներից, ո՞րը ՊԿ գնդացրից հրաձգություն վարելու եղանակ չէ:**
1.կարճ
2.Երկար
3.Անընդհատ
4.Ընդհատվող

14. **Նշվածներից ո՞րն է տարածվում կենսաբանական զենքով։**
    1. Լյուիզիտ
    2. Զարին
    3. Զոման
    4. Տոքսիններ
15. **Ինչպիսի՞ հիվանդություններ են առաջացնում ռիկետսիաները։**
    1. Բծավոր տիֆ և տենդ
    2. Կարդիոզ և ծաղիկ
    3. Դեղին տենդ և բծավոր տիֆ
    4. Ծաղիկ և բծավոր տիֆ
16. **Քանի՞ ֆիդայի էր մասնակցում Առաքելոց վանքի կռվին։ (37)**
17. **Սարդարապատի ճակատամարտում թուրքական զորքը քանի՞ հազար զոհ տվեց։[1] (13 հազար).**
18. **Որովայնի վնասվածքի դեպքում քանի՞ րոպե ընդմիջումով է կարելի սառցապարկ դնել։ 20ր**
19. **Կենդանու կծածի դեպքում տուժածին քանի՞ օր պետք է պահել հսկողության տակ։ (14 օր)**
20. **Որքա՞ն է կալաշնիկովի գնդացիրի գնդակի սկզբնական արագությունը (825 մ/վ)։**

[1].Պատասխանը գրելիս «հազար» բառը անհրաժեշտ չէ գրել, պետք է գրել միայն թիվը։